

գոյժ խռովութիւն ինչ ի մէջ թագաւորացն երկոցունցն արասցէ, ի խնդիր անկաներ զնոյն գոյն ձի, զնոյն նշան, զնոյն պատկեր, բաց ի մեծութենէ՝ զի այնչափ ուրեք ոչ գտաներ, զնոյն նման զնոյն կերպարանս ճարտուկ ճանճկէն գտեալ, եւ հանդերձ հրովարտակաւք եւ պատարագաւք ի ձեռն մոլեկան Փիսակայն առ իշխանն յԱտրպատական առ Վարազն արձակեր: 11 Եւ միտս ղնելով խորհուրդ առնէր. զի ասասցես, ասէ, եթէ այս ինքն է գոր խնդրեցերն, զի առ սեր ոչ ինայեաց ի քէն: 12 Իսկ նա յորժամ հասեալ առ Վարազն, յայտ առնէր զիրս ինայութեանն, ի գրգռութիւն ջանացեալ՝ ոչ կամեր բժշկել զնենգախաւսութիւնն իւր. այլ եւս քան զեւս սրեալ զչարախաւսութիւնն իւր, ասելով եթէ այնչափ ի հեռ եւ ի նախանձ, ի չարակնութեան եւ ի թշնամութեան, ի յատելութեան եւ ի չկամութեան, յերկմտութեան եւ յաներկիւղութեան առ թագաւորն Պարսից եւ առ ամենայն զաւրսն Պարսից արքայն Յայոց Տիրան, մինչ անգամ վասն կաշոյ միոջ ինայ արարեալ՝ թագոյց, եւ զքեզ ծաղր արարեալ, եւ այլ ընդ այլոյ զմիտս գողանալ քո. գոր յիմ ձեռն ետ ածել, առ քեզ առաքեաց: 13 Եւ ոչ այդ միայն է, ասէ. այլ ի կայսր եւ ի զաւրս Նորա յուսացեալ, խորհի հանել զթագաւորութիւն Պարսից յազգէն Սասանայ. զի ասէ, թէ մեր լեալ է եւ հարցն մերոց այն տերութիւնն: 14 Արդ ասէ, թէ չեմ ծուղալոց՝ մինչեւ դարձցի պատիւ հարցն նախնեաց. զնախնի զթագաւորութիւնն այսրէն առ որդի եւ առ զաւակ լոցա յազգս իմ եւ ի տունս իմ եւ յանձն իմ դարձուցանեմ: 15 Եւ այսչափ եւ այսպիսի բանիւք զրգռէր զնա Փիսակն անաւրէն ի վերայ տեառն իւրոյ բնակի, եւ նիւթեր զմահ ի վերայ իւրոյ թագաւորին:

16 Ապա իբրեւ զայս ամենայն լուաւ Վարազ Շապուհ Ատրպատական մարզպան ի կատաղախաւս ի շնաբերանն Փիսակայ, վաղվաղակի նամակ ամբաստանութեան գրեալ Վարազայ արքայէն Յայոց՝ մատուցանէր Ներսէհի արքային Պարսից: 17 Եւ այնչափ զայրացոյց զրգռեաց յուզեաց դրդեաց սրտմտեցոյց բարկացոյց զթագաւորն Պարսից ի վերայ արքային Յայոց, որ ապա ա՛ռ հրաման ի նմանէ, զինչ՝¹ եւ է հնար գտանել մարթել ճանապարհս, մեքենայիւք զայթակողութիւնս ղնել՝ որսալ ըմբռնել զարքայն Յայոց: 18 Եւ մինչ դեռ խաղաղութիւն էր ի մէջ թագաւորացն երկոցունց, բարկութիւն Տեառն զրգռեաց յուզեաց զվրէժս, զի խնդրեցին սուրբ արիւնք մահուցն երկուց մեծացն քահանայիցն առաջնորդացն յանաւրէնն Տիրանայ:

19 Ապա յայնմ ժամանակի Վարազն արձակէր դեսպան առ արքայն Յայոց, ի հաշտութիւն խաղաղութեան դաւով խաւսել ընդ նմա. զանձուկ սիրոյ պատճառեալ, համարձակութիւն խնդրէր՝ գալ նմա առ նա: 20 Իսկ իբրեւ լուաւ զայն Տիրան արքայն Յայոց, փութապէս վաղվաղակի մեծաւ ուրախութեամբ առ ինքն կոչել հրամայէր: 21 Եւ մինչ չեւ նա եկեալ էր, խորհէր ար-

1 Յոր. զի չեւ է